

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ 1600 ԱՄԵԱՅ (313-1913 թ.)

ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ.

Մինչև չորրորդ դարի սկիզբը քրիստոնէութիւնը հալածուած կրօն էր: Առաջինը Հայաստանում դարձաւ այն պետական կրօն ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ և Տրդատ թագաւորի զործակցութեամբ: Ազգային աւանդութիւնն ու տոհմական պատմական տուեալները հայերիս ազգովին դարձը դնում են Գ. դարի սկզբին—301-303 թուերին: Պատմական արդի հետազօտութիւնները աւելի վաղ են համարում այն: Զեմս Ռորերտսոն (История Христианской церкви томъ I եր. 141) հայերիս քրիստոնէութիւնը դնում է II դարի կէսից ոչ վաղ: Եւ իսկապէս, հայերիս դարձը պէտք է որ աւելի վաղ լինէր, որ կարողանայինք, որպէս քրիստոնեայ պետութիւն, քրիստոնէութեան պաշտպանութեան համար 311 թուին պատերազմել Մաքսիմիանոսի դէմ, ինչպէս առնելով Եւսեբիոսից (եկեղ. պատմ. դպր. թ. զլ. Ը.) հաստատում է Ա. Մ. Գարազաշեանը (Քննական պատմութիւն Հայոց, Թիֆլիս. 1895 թ. մասն Գ. եր. 339):

Հռովմէական կայսերութեան մէջ կրօնական համբերողութեան առաջին հրովարտակը տուել է Գաղերիոսը 311 թուին Միլանում: Կրօնական համբերողութեան և յատկապէս քրիստոնէութեան օգտին երկրորդ հրովարտակը տուեց Կոստանդին Մեծը Մաքսենտիոսին յաղթելուց յետոյ 312 թուի հոկտեմբերի վերջերին: Կոստանդինը իւր գահակից Լիկինիոսի հետ 313 թուի յունիսին տուեց Միլանի յայտնի հրովարտակը, որով վերջնականապէս ապահովեց քրիստոնէական կրօնի ազատութիւնը: Այս հրովարտակով կայսրը հրամայում էր, որ քրիստոնեաները

կայսերութեան մէջ ազատօրէն պաշտեն իրանց կրօնը, ունենան այն բոլոր իրաւունքները, որ վայելում են միւս հպատակները, վերադարձուեն քրիստոնեաներին նրանց եկեղեցիներն ու եկեղեցական կայքերը, պետական պաշտօնակալները հոգան վերադարձման գործը և բաւարարուեն պետական գանձարանի հաշուով այն պահանջները, որ կը յարուցանեն քրիստոնեաները (Եւսեբիոս եկեղ. պատմ. դպր. Ժ. դլ. Ե.)

Ս. յս տարի լրացաւ այդ նշանաւոր հրովարտակի 1600 ամեակը և արեւմտեան ու արեւելեան եկեղեցիները իրանց ստորաբաժանումներով ու հերձուածներով հանդիսաւորութեամբ տօնեցին Միլանի այդ հրովարտակի 1600 ամեայ յորելեանը: Ռուս պրաւօսլաւ եկեղեցին իւր Սրբազան Սինօդի կարգադրութեամբ այդ յորելեանը կատարեց այս տարի սեպտեմբերի 14-ին, երբ նոյն պրաւօսլաւ եկեղեցին տօնում է ս. Խաչի վերացման տօնը, համարելով Միլանեան այդ հրովարտակի հրատարակութիւնը ս. Խաչի նշանի յաղթանակ:

Հայ եկեղեցում այդ յորելեանը չտօնուեց, որովհետև յիշեալ հրովարտակից առաջ արդէն մեր եկեղեցին ազգային պետական կրօնական հաստատութիւն էր: 1903 թուին մեր հայ եկեղեցին կամեցաւ տօնել իւր զոյլութեան, ազգային աւանդութիւններով սրբագործուած, 1600 ամեակը. սակայն Գալիցիեան վարչութեան խստութիւնները ոչ միայն արգելք եղան այդ տօնակատարութեանը այլ և մեծ տազնապ պատճառեցին մեր եկեղեցուն՝ եկեղեցական գոյքերի դրաւմամբ, որով այդ տարին յորելեանական տօնի տարի լինելու փոխարէն սգի և տխրութեան տարի դարձաւ: Մի և կէս տարի յետոյ՝ ներկայ փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Գաշկովի խոհական վարչութեան շնորհիւ, եկեղեցին վերստացաւ իւր իրաւունքները և թէև սրանով համատարած ուրախութիւն և խնդութիւն համակեց բոլորին, սակայն յորելեանի տարին արդէն անցել էր:

Որքան և մեր եկեղեցին պաշտօնապէս չմասնակցեց Միլանեան հրովարտակի 1600-ամեակի յորելեանին, բայց

չի կարող անտարբեր մնալ դէպի այն խնդու թիւնը, որով համա-
կուած է ընդհանուր քրիստոնէական եկեղեցին:

Թէ կրօնական և թէ աշխարհիկ՝ ոուս թերթերը, ընդար-
ձակ յօդուածներ նուիրեցին Միլանի հրովարտակի յորելեա-
նին: Որպէս զի գաղափար տանք հայ ընթերցողներին թէ որ-
պիսի խնդիրներ են շօշափուել և ի՞նչ խորհրդածու թիւններ
են եղել այդ յորելեանի առիթով՝ քաղուածօրէն թարգմա-
նութեամբ հրատարակում ենք Ս. Պետերբուրգի Հոգևոր
կայսերական ձեմարանի «Церковный Вѣстникъ»-ի յաւելուած
Христианское Чтение ամսագրի այս տարուայ սեպտեմբերի
գրքից պրօֆես. А. Бронзовъ-ի «Христианство и Жизнь, по
поводу 1600-лѣтняго Христианскаго юбилея (313—1913 г. г.)»
յօդուածի որոշ կտորները: Ափսոս որ խիստ և կրքոտ ար-
տայայտութիւններով ինքն հեղինակը նսեմացրել է իւր
յօդուածի նշանակութիւնը, բանակուելի կերպարանք տա-
լով նրան:

Յ. Ա. Ե.

9 հոկտմ. 1913 թ.

Ս. էջմիածին

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆՆ ՈՒ՛՛ ԿԵԱՆՔԸ.

Քրիստոնէական 1600 ամեայ (313-1913 թ.) յորելեանի
առիթով.

1600 տարի է անցել այն օրից, երբ քրիստոնէութիւնը
հալածուած և արդելուած կրօնից, պետական իշխանու-
թեան պաշտօնական թոյլտուութեամբ դարձաւ ազատ դա-
ւանութիւն:

Այս վերին աստիճանի նշանաւոր, բացառիկ կարեու-
րութիւն ունեցող իրողութիւն է: Շատ տեղին է այդ իրո-
ղութիւնը յատկապէս շեշտել այժմ, երբ, ինչպէս ցոյց կը
տանք, քրիստոնէութեանը նորից սկսում են զանազան
կողմերից սպառնալ, անյողողող եռանդով, անխտիր գործ

դնելով ամեն միջոց: Միայն այն պատճառով որ, օրինակ, կաթուղի աշխարհը տօնում է քրիստոնէական այդ յոբելեանը անսովոր շքեղութեամբ, տօնակատարութեան ժամանակամիջոցը ընդերկար լայնելով:

Որպէս արտայայտութիւն յոբելեանական հանդիսատարութեան պէտք է կառուցուեն տաճարներ, հրատարակուեն մասնագիտական գրուածքներ և սրանց նման բաներ: Քրիստոնէութեան թշնամիները թող տեսնեն, թէ քրիստոնէութիւնը որքան զօրեղ է այժմ էլ: Թող ուրախանան քրիստոնեաները, որ իրանց կրօնքը անընկճելի է, հաստատուն է և կենդանի: Անկասկած մեր պրաւոսլաւ եկեղեցին էլ կը կամենայ աւելի ևս հանդիսաւորութեամբ տօնել նրա պատմութեան և կեանքի մէջ այս նշանաւոր հանգէսը կատարել՝ կենսատու և սուրբ Խաչի վերացման տօնին, որովհետեւ 313 թուին «Միլանի էդիկտի հրատարակութիւնը, որ քրիստոնէութիւնը ազատ կրօն դարձրեց, եղաւ Քրիստոսի խաչի յաղթութեան նշանը հեթանոսների յիմարութեան դէմ: (էդիկտի հրատարակութեան օրը ճշտիւ յայտնի չէ):

1600 տարին բաւական մեծ շրջան է, որի ընթացքում քրիստոնէութիւնը կարողանար բոլորի համար պարզ և բազմակողմանի կերպով երևան դալ: Աւստի, կարծում եմ, այժմ ի դէպ է, զոնէ մի փոքրիկ հաշիւ տեսնել, թէ քրիստոնէութիւնը ինչ է արել մարդկութեան համար, որքան է նպաստել ճշմարիտ առաջադիմութեան, ճշմարիտ կուլտուրային...: Այդ հաշիւը ակներև ցոյց կը տայ թէ ինչ մեծ ոյժ է մեր կրօնքը, որը մենք դաւանում ենք, որով պարծենում ու փառաւորւում ենք՝ որպէս միակ ճշմարտութեամբ ու սրբութեամբ: Այս հաշիւները ամենից բնական է յիշեալ քրիստոնէութեան յոբելեանի օրը...:

Մենք համարձակօրէն կարող ենք հրատարակել այդ հաշիւը: Քրիստոնեաներս երբ նայում ենք քրիստոնէութեան որպէս ազատ կրօնքի 1600 տարուայ կեանքի վերայ՝ պարծենալու բան տեսնում ենք: Այդ ազատ շրջանում, երբ քրիստոնեաները այլ ևս երկչոտութեամբ և թաքուն չէին

կատարում աստուածպաշտութիւնը մի որ և է ծածուկ տեղում՝ պետութեան հսկողութիւնից զազտուել:

Արդ, այս ի՞նչ հաշիւներ են:

Ի՞նչ ենք տեսնում այն ժամանակ, երբ կոստանդին Մեծը հրատարակում էր Միլանի հրովարտակը: Այդ ժամանակի կեանքը ի՞նչ բնոյթ ունէր:

Հեթանոսական կրօնքը սաստիկ ընկած էր: Կարելի է ասել, որ ոչ մի հեթանոս, որ քիչ շատ մտածել ու դատել կարողանար, չէր հաւատում հեթանոսական առասպելաբանութիւններին, հեթանոսական կրօնական ծէսերին, զոհաբերութիւններին... Ամենքին յայտնի է, որ նոյն իսկ հեթանոս քուրմերը իրանց մէջ ծաղրում էին՝ երբ խօսում էին իրանց կրօնական պաշամունքների, հաւատալիքների ու ծէսերի մասին, և շարունակում էին իրանց կեղծաւոր պարտքը կատարել միայն, որ ապրուստի միջոց և յարգ էին ստանում: Աւելորդ է խօսել, թէ այս հանգամանքում, տարօրինակ կը լինէր մտածել որ այդպիսի կրօնքը ազգեցութիւն ունենար ժողովրդի ամբողջի վերայ: Ի նկատի ունենք զլիսաւորապէս կայսերութիւնը բաղկացնող ժողովուրդների կրօնական հայեացքը, կայսերութիւն, որի սահմաններում պէտք է տարածուէր քրիստոնէութիւնն ակզբում:

Հեթանոսական փիլիսոփայութիւնը զգացել էր, իւր բոլորովին անկարողութիւնը մարդկութիւնը փրկելու, — բարձրացնելու նրա բարոյական մակերևոյթը, նրա մէջ հողեոր արիութիւն և եռանդ ներշնչելու: Ստոյիկականութիւնը, որ այս դէպքում ամենից աւելի էր խոստանում և որի վրայ ամենից աւելի կարելի էր յոյս դնել, իսկապէս այնքան անկարող եղաւ՝ որքան միւս փիլիսոփայական ուսմունքները: Միլանի էդիկտի հրատարակութեան ժամանակ այն արդէն անյոյս մեռնում էր:

Հեթանոսական աշխարհի բարոյական կեանքը մի շատ տխուր բան էր ներկայացնում: Մարդկանց իրար հետ կա-

պող սիրոյ սկզբունքը չկար: Նրա տեղ թաղաւորում էր
 եսականութիւնը, կոպիտ անձնասիրութիւնը: Ամենից աւելի
 խստասրտութիւնն էր զգում ու լսում այն ժամանակի
 աշխարհը...: Բարոյական սանձարձակութիւնը, որ ոչ մի
 բանով չէր զսպւում, խիստ աճում էր ու զօրանում:
 Եւ այս հասկանալի է: Կրօնն է բարոյականութեան քաջա-
 լերողը, նեցուկն ու ջերմացնողը...: Միայն տկարամիտները
 կարող են կարծել, որ առանց կրօնի կարող է հաստա-
 տուն բարոյականութիւն լինել: Բայց եթէ բարոյականու-
 թիւնը հիմնուած է այնպիսի խեղճուկ կրօնի վերայ, որ-
 պիտին էր, օրինակ քրիստոնէութեան երեւան զաւու ժամա-
 նակի, յոյն-հռոմէական հեթանոսական, կրօնը, այս դէպ-
 քում էլ հետեւանքը շատ լաւ չի լինի¹⁾:

Միով բանիւ, երբ հրատարակում էր Միլանի հրո-
 վարտակը՝ հեթանոս աշխարհի հողէոր կեանքը ամեն կեր-
 պով տխուր էր:

Այս հաստատում են ընդհանրապէս նոյն իսկ սոցիա-
 լիստները, որոնց բնաւ չի կարելի քրիստոնէութեան հա-
 մակիր կամ կուսակից համարել: Գրանք էլ (օրինակ Մեն-
 գեր, Կառւտսկի ևն²⁾) միաձայն ասում են որ զառամեալ

1) М. О. МЕНЬШИКОВЪ-ի պէս հրապարակախօսներն իսկ պըն-
 դում են, որ անհրաժեշտ է կրօնական դաստիարակութիւն (ինչ
 կրօն ուզում է լինի, միայն կրօն լինի), որպէսզի արմատախիլ
 լինի խուլիգանութիւնը, որը անհնարին է լինում բառնալ... և թէ
 առանց կրօնի՝ բոլոր այլ միջոցները այս հանգամանքում անզօր
 են...: Այս, ասում է նա, իհարկէ ուզիղ է, և ցանկալին կարելի է
 ձեռք բերել կրօնի միջոցով...—Ոչ, այն ձեռք կը բերուի միայն
 քրիստոնէական կրօնի միջոցով, որ միայն սուրբ, ճշմարիտ և
 աստուածային է: Միւսները բոլորը սուտ են որոշ աստիճանի, իսկ
 ուր ստութիւն կայ, այնտեղ բարի և բարեբար պտուղներ մի
 որոնէք...:

2) Менгеръ Антоуъ ի «Новое учение о нравственности» (որ
 ուսերէն շատ հրատարակութիւն է ունեցել 1906 և յետագայ
 թուականներին). Каутскій-ի «Этика и материалистическое пони-
 маніе исторіи» (շատ հրատարակութիւններ ուսերէն 1906 և
 հետագայ թուականներին):

հեթանոսութիւնը մեռնում էր, պէտք է անհետանար աշխարհից, որպէս մի հնացած և ամեն ոյժ ու նշանակութիւն կորցրած, բոլորովին անյոյս բան: Սոցիալիստները դեռ ակեղցնում են, որ հեթանոսութեան վախճանի ժամին նրան կարող էր փոխարինել միայն քրիստոնէութիւնը, որ վերջինս միայն այն ժամանակ կարող էր մարդկութիւնը հանել այն յուսահատ վիճակից, որի մէջ գտնուում էր...: Քրիստոնէութեան անպատրուակ թշնամի սոցիալիստների խօսքով իսկ, քրիստոնէութիւնը հեթանոսութեան տեղը բռնեց բնականաբար, անհրաժեշտօրէն...:

Եւ յիշուի,— կասենք,— քրիստոնէութիւնը թարմ ոյժ էր, որ նոր եռանդ կամ լաւ ևս նոր հոգի էր ներմուծում մարդկութեան մէջ: Քրիստոնէութիւնը, վաղանցուկ, սխալներով ու ամեն տեսակ մոլորութիւններով լի մի մտածմունք չէր, այլ աստուածային, անսխալ յաւիտենական կրօնք էր. քրիստոնէական բարոյականութիւնը, որ յենուում է այնքան բարձր կրօնքի վերայ և նրանից բղխում իւր հերթին՝ անսխալ է, բիւրեղի պէս մաքուր, և ամենից գերազանց: Իսկական քրիստոնեաների կեանքը համակուած քրիստոնէական բարձրագոյն պատուիրանի— սիրոյ հոգով, լի է բարեացակամութեամբ, իսկական քրիստոնեան պատրաստ է մերձաւորի բարւոյն համար անձնազոհ լինել:

Սոցիալիստները ասում են, որ 19 դար առաջ թէև հեթանոսութեան տեղը բնականաբար պէտք է բռնէր քրիստոնէութիւնը, բայց միևնոյն ժամանակ պնդում են, որ քրիստոնէութիւնն իւր պատմական երկարատև կեանքի ընթացքում, որպէս թէ «չէ արդարացրել իւր վերայ դրուած յոյսերը» (И. Гюйо¹), այսպէս ասած, խաբել է բոլորին, «անպտուղ» է երեւցել ևն. և թէ այս իսկ պատճառով ենթակայ է անհետանալու, մահուան, ինչպէս որ ձերութեան ու զանաւեղութեան հետևանքով մեռաւ հեթանոսութիւնը...:

1) И. Гюйо: «Соціальные учения Христианства» Одесса 1907 г. кн. I № 3... համ. А. Рау «Die Ethik Jesu» (Giessen 1899) և այլք.

ինչպէս որ հարկ եղաւ հեթանոսութիւնը բնականաբար և անհրաժեշտօրէն փոխանակել քրիստոնէութեամբ, այդպէս էլ, ասում են սոցիալիստները (Менгеръ ևն), և քրիստոնէութիւնը այժմ պէտք է փոխանակուի սոցիալականութեամբ, որը, որպէս թէ, կը լրացնի այն թերին, ինչ որ չարեց քրիստոնէութիւնը, և կը կատարի այն բոլոր լաւագոյն իղձերը, ինչ որ լսել է մարդկութիւնը երբ և իցէ, բաց յայսմանէ սոցիալիստ ուսուցիչներին նայելով՝ սոցիալիստութիւնը որպէս թէ այժմ՝ արդէն տալիս է մարդկանց երջանկութիւն, ուր ունի գործելու ազատութիւն և ուր նրան չի խանգարում յետաձնաց, կասեցնող քրիստոնէութիւնը, որը որպէս թէ մարդատեաց է և մարդկային բնութեանը, նրա շահերին ու պահանջներին հակառակ քարոզող . . .

Այս պատճառով էլ ինչպէս սոցիալիստները, նոյնպէս և նրանց նման անաստուածները, զլուխ ունենալով մասոններին և մասոնութիւն անողներին, ամեն կերպ աշխատում են արմատախիլ անել իրանց ատելի քրիստոնէութիւնը, ըստ եզուիտների սկզբունքի՝ խտրութիւն չղնելով միջոցների մէջ, միայն թէ հասնեն իրանց զազիր նպատակին: Ինչ արին և ինչ են անում նրանք այնպիսի երկրներում, որպիսի են Ֆրանսիան, Պորտուգալիան, Հիւսիսային Ամերիկան ևն. ամենքին յայտնի են: Շատ ժամանակ չէ, որ Պորտուգալիայում նրանք կենդանւոյն այրեցին կոյսերին: Իսկ Ֆրանսիայում անցած յունիսի 25-ին, ըստ լրագրական հեռագրերի, փակման էին դատապարտուած արդէն վերջին «Վանական դպրոցները»: ¹ Ֆրանսիայում անաստուածները հետամտում են, թէ որ աստիճանաւորները,

1) Անհնար է առանց վրդովման կարգալ Новое Время-ում գետեղուած Պարիզի հեռագրերը ներկայ թուի օգոստոս 14 (№ 13442) «քաղաքապետի կարգադրութեամբ Մօնմարտրում Վանական դպրոցները փակելու» մասին, որ «մեծ վրդովմունք է առաջ բերել նրանց մէջ, որոնց վերաբերում էր այն: Եւ փակման հետևանքով մօտ հազար աշակերտ փողոցում մնացին». ըստ երևութիւն, այս ամեննին չազդեց քաղաքապետի վերայ: Կարևոր էր,

սպաններն են յաճախում կաթոլիկական տաճարները, և յաճախողներին սովորաբար հալածանքի են ենթարկում, մինչև անգամ պաշտօնագուրկ են անում: Ֆրանսիայում գպրոցներից հեռացուած է Քրիստոսի Աւետարանը՝ Խաչելուծիւնը...: Հիւսիսային Ամերիկայում կատարւում են հրէական բոլոր տօները և հալածուած է քրիստոնէութիւնը: Այնտեղ շաբաթը կիւրակէից աւելի սիրելի է: Այնտեղ քրիստոնէական սկզբունքից աւելի է զնահատւում դրամը: Իսկ Իտալիայում կաթոլիկութեան մայր աթոռում անհնարին բաներ են կատարւում (բառացի կերպով) «թքում են Քրիստոսի Խաչի վերայ»...: Մինչև անգամ Չինաստանում ինչպէս երևում է յունիսի 27-ի հեռագրերից, խիստ հակաքրիստոնէական պրօպագանդա է մղւում: Թուրքերի մասին աւելորդ է խօսելն: Երբեմն բարբարոսների ժամանակ խաչակրաց արշաւանքներ էին կազմւում դէպ ի Պաղեստին Փրկչի Գերեզմանը «անհաւատներին» ձեռքից ազատելու համար: Իսկ այժմ՝ Եւրոպայի «քրիստոնեայ» պետութիւնների անտարբերութեամբ (ինչպէս հաղորդում են հեռագրերը օնցեալ յունիսի 16-ից) Թուրքերը միայն «Չաթալհայից Սղրիանուպօլիս շարժուելիս սպանել են 15000 քրիստոնեայ»...: Այս ի հարկէ միայն Նրազրական լուրը չէ...: Ուր չի կարելի խիստ վարուել այնտեղ անասուածներն ու Քրիստոսի թշնամիները նուրբ միջոցներ, ծաղր, վարպետ հեզնանք են գործադրում...

Խարդախուած եզրակացութիւնները յանուն «գիտութեան» այնպէս անարատ են ներկայացւում, որ ինչ էլ լինի՝ մարդկանց աչքում սղարտեն քրիստոնէութիւնը և ապացուցանեն որ քրիստոնէութիւնը արդէն հնացել է, և իւր պատմութեան բոլոր ընթացքում ինչպէս այս առաջ էլ

հաւանօրէն, այն, որ մանուկները չստանային քրիստոնէական կրթութիւն, որ այնքան ատելի է մասոններին ու հրէաներին: Աւելի լաւ է որ նրանք բոլորովին անուս մնան...-իսկ խօսքով՝ այդ պարոնները «ազատութիւն, եզրայրութիւն, հաւասարութիւն են քարոզում:

նկատուած է միշտ եղել է կեանքի համար բոլորովին անպէտք և մինչև անգամ վնասակար... և այլն:

Քրիստոնէութեան դէմ ամբաստանութիւնը այնքան լուրջ է, որ չի կարելի լուութեամբ անցնել: Այս ամբաստանութիւնը հիմնաւոր է: Յիրաւի՞ քրիստոնէութիւնը այնքան տկար է, ինչպէս նրան համարում են անաստուածները:

Քրիստոնէական նշանաւոր յոբելենական տարում վրձնապէս յայտնում ենք, որ բոլոր ամբաստանութիւնները գլխովին սուտ են, անպայման բանսարկութիւն են և թէ, քրիստոնէութեան ու կեանքի համար նրան նշանակութեան մասին՝ պէտք է հակառակն ասել: Այո՛, հազար անգամ «այո»...:

Հաստատապէս պնդում ենք, որ քրիստոնէութիւնը հետզհետէ միայն ազնուացրել է, միայն վերածնել է մարդկութիւնը ի բարին և անընդհատ վերածնում է: Այն ամենը, ինչով ճշմարտիւ կարող է պարծենալ մեր ժամանակը, առաջ է եկել միմիայն քրիստոնէութեան շնորհիւ:

Ինչի՞ մասին է խօսում մեզ պատմութիւնը:

Խօսում է մեզ այն մասին, որ ուր ուրեք, քրիստոնէութիւնը բացակայում է, կամ տնտես է առնում, համեմատաբար ընկած է մարդկային բարոյականութիւնը և մարդկութիւնը մեծ կամ փոքր չափով վերադարձել է գէպի վայրենութիւն:

Օրինակները աչքի առաջ են: Օրինակ, այժմ երբ, այսպէս ասած, մտաւորականութիւնն ինքն էլ իւր խռանի մէջ չի հաւատում ոչ Քրիստոսին և ոչ ինչ որ գերբնական է, և ըստ այնմ էլ տրամադրում է ժողովրդին, ջանալով նրան հակաքրիստոնէայ դարձնել ու նրա «հոգին» ունայնացնել, նոյն չափով էլ ընկել է բարոյականութիւնը, բարոյական խուլիզանութիւնը, սրիկայութիւնը դառնում են հետզհետէ սովորական երևոյթ...: «Գիլեիչի» պատմութիւնը՝ «պրասոլովսկեան գործը», հայրասպանութիւնները, այ-

րասպանութիւնները, կնասպանութիւնները ամեն տեսակ քոնութիւնները ամենօրեայ և սովորական երևոյթ են դարձել: Ոչ միայն սպանում են, այլ և կտոր կտոր յօշոտում են, դնում են կողովի մէջ և որպէս ապրանք տեղափոխում են: Իսկ «Обводный Каналъ»-ի յայտնի դէպքը՝ Օրը ցերեկով կինը սպանում է իւր ամուսնուն, կտոր կտոր յօշոտում է սպանածին, կտորները հանգիստ կերպով տանում ձգում է զանազան տեղեր, որ յանցանքի հետքերը կորցնի...: Կրթուած և լուսաւորուած մարդիկ «պիրօզովեան համագումարի ամբիօնից» քարոզում են ոչ այլ ինչ, բայց միայն արգանդի պտուղի ոչնչացումն¹⁾: Ահա թէ առանց Աստուծոյ, առանց կրօնի կրթութիւնը ուր է տանում: Եւ միայն այս ենք լսում: Բայց երբ այդ «կրթութուած» մարդկանց լրագրերում յանդիմանում են, նրանք հանգիստ կերպով իրանց հակառակորդներին մեղադրում են խաւարամտութեան, յետամնացութեան մէջ, ևն: Իսկ գործարանային բարքերը՝ Գիւղերի, յատկապէս մեծ քաղաքների կեանքը՝ Միշտ յառաջադիմում է սարսափելին, անլուրը, շտեմնուածը: Այս, արդէն ճշմարիտ է, որ մեր «խստասրտութեան յառաջադիմութեան էփօլուցիան²⁾» է և ոչ սիրոյ կամ նրա նման մի որ և է լաւ զգացման: Եւ այս բոլորը կատարելագործւում, յառաջադիմում է, կրկնում ենք՝ որքան որ քրիստոնէական ազդեցութիւնը կեանքից վերացւում է, որքան որ հեռացւում է քրիստոնէութիւնը մարդկային հոգիներից: Նոյնը մենք առաջ տեսնում էինք Ֆրանսիայում «մեծ յեղափոխութեան» ժամանակ (չարագործութիւնների վերաբերմամբ միայն):

Իսկ ուր, ընդհակառակն, թաղաւորում է քրիստոնէութիւնը, ուր քրիստոնէական գաղափարներով ու սկզբունքներով են ապրում, այնտեղ ծաղկում է բարոյականութիւ-

1) *Сво Новое Время* 1913 թ. յունիսի 3. № 13387 М. О. Меньшиковъ.

2) *Կարգացէք* М. А. Энгельгартъ-ի շատ կէտերում հետաքրքրիկ «Прогрессъ, какъ эволюція жестокости» գիրքը, СПб. 1899.

նը, կոպիտ անձնասիրութիւնը մի կողմ է մնում՝ տեղի տալով սիրոյ բարեացակամութեան զգացմունքին. կոպիտ արատները անհետանում են. այն տեղ, կարճ ասած, հաստատուում է զրախտ, զրախտային կեանք:

Իսկապէս, նայեցէք գոնէ Վալաամի վանքին և այն տեղի կեանքին: Ամենուրեք՝ առաջին տեղում—մեր Տէր Յիսուս Քրիստոսն է... ամեն տեղ ամենից առաջ Քրիստոսի հաւատը, Քրիստոսի պատուէրն է... Թէ խօսքերում, Թէ սրտերում և Թէ կեանքի մէջ...: Դրա համար էլ որպիսի բարձր և նախանձելի բարոյականութիւն կայ այստեղ: Խաղաղութիւն, ջանասիրութիւն, սէր, աղօթք... բարեացակամութիւն... է թաղաւորում, երկրաւոր արատների մասին լուր չկայ: Օրինակ մայրաքաղաքի բնակիչը՝ որ պատահաբար մտնում է այնտեղ, իսկապէս հիանում է. սքանչանում է այստեղ լսածից ու տեսածից, Վալաամեան բոլոր մթնոլորդից: Ո՛հ, եթէ աշխարհս գոնէ մի որոշ աստիճան նմանէր Վալաամեան կեանքին՝ այն ժամանակ էլ աւելի բան պէտք չէր... Ա. յո¹):

Եւ միշտ էլ «այսպէս» կրլինէր յընթացս 1600 տարիների (առաջ էլ ի հարկէ) «քրիստոնեաների» միջավայրում, եթէ ժողովուրդները, քաղաքները, գիւղերը, ... մասնաւոր անհատները «դարձած լինէին» քրիստոնեայնրանց կեանքը բարեփոխուած կրլինէր, նրանք հեշտութեամբ կընչէին, նրանց մէջ և շուրջը ամեն բան կը ծաղկէր: Եւ ընդհակառակն, որքան անտես արուեց քրիստոնրութիւնը՝ կեանքը այնքան մթազնեց զանազան արատներով, ամեն տեսակ անբարոյականութեամբ. մարդկութիւնը շրջապատուեց հոգևոր մառախուղով, որ կորստաբեր և մահացուցիչ է...²)

Ահա թէ որպիսի ինչ է «իսկական» քրիստոնէութիւնը:

.

1) Կարդացէք յօդուածիս հեղինակի «Рай на землѣ. Валаамскія впечатлѣнія» յօդուածը («Христіанское чтение»; 1912 թ. Сентябрь).

2) Ահա թէ ինչու Հարաւային-Ամերիկայի մի հասարակա-

Սակայն բաւական է. քննելով և ղնահատելով այն ամենը, ինչ որ առարկում են քրիստոնէութեան արդի թրշնամիները՝ որոնք տքնում են ապացուցանել թէ անկենսունակ է այն, ապարդիւն և անպտուղ... արդէն ստացանք լիակատար իրաւունք եզրակացնելու թէ, ոչ պ. սոցիալիստներ և այլք, ոչ անպտուղ չէ քրիստոնէութիւնը այլ անպառ բարերար, ճշմարիտ և կենսունակ է...: Եւ նա արդարացրեց այն «վստահութիւնը» որը ցոյց տուեց դէպի նա մարդկութիւնը: Ինչպէս ցոյց է տուել քրիստոնէական շրջանի մարդկութեան կեանքի երկար պատմութիւնը, քրիստոնէութիւնը հանդիսացել է անփոխարինելի և անհամեմատելի: Ըստ այսմ էլ քրիստոնեայ ժողովուրդները, ոչ թէ պէտք է քրիստոնէութիւնից չհրաժարուեն այլ միայն և միայն պարծենան նրանով, որ քրիստոնեայ են: Ընդունելով և խոստովանելով քրիստոնէութեան այնքան բարերար լինելը, թէ ինչպէս քրիստոնէութիւնը կարող է բոլորովին վերաստեղծել կեանքը, թէ որպիսի հրաշալի հոսանք կարող է ներարկել մարդկութեան մէջ... — քրիստոնեայ ժողովուրդները պարտաւոր են միայն աշխատել աւելի և աւելի իւրացնել քրիստոնէական սկզբունքները, և աւելի ու աւելի համակուել այդ սկզբունքների հոգևով...: Եւ ընդ այսմ քրիստոնէութեան արդիւնաւորութիւնը աւելի ու աւելի հրապուրիչ, համոզեցուցուցիչ կը դառնայ:

Հաւատանք և յուսանք, որ քրիստոնէութիւնը հետ-

պետութեան զգաստացած բնակիչները անցեալ ամառ վերադարձրին դպրոցներին և պետական հաստատութիւններին են, վաղուց հեռացուած ս. Խաչը, ս. Աւետարանը և այլն: Անաստուածութիւնը այնպիսի զգաստացուցիչ պտուղներ էր տուել, որ քրիստոնէութիւնից հեռացածներին միանգամից ատելի էր դարձել անաստուած մնալու հաճոյքը: Միանգամից բացուեցին նրանց աչքերը, և նրանք տեսան որ իրանց վրկութիւնը կրօնի մէջ է և ի մասնաւորի՝ քրիստոնէական կրօնի, որը մինչև այդ ժամանակ, շատ տարիներից ի վեր, ծաղրում էին...: Կարևոր դէպք է այս, որ հրատարակեցին ամառը մի քանի լրագրեր:

զհետէ աւելի ու աւելի կը տարածուի և կը գրաւի նորանոր աշխարհներ. որ քրիստոնէութիւնը տոկունութեամբ և արդիւնաւորութեամբ կը վերածնի սերունդներ սերունդներէ ետեւից... Թէ նա կը կատարի այն, որը չի անցել և՛ նրանց մտքով, որոնք զուրկ են աստուածային շնորհից, երկնաւոր օգնութիւնից և անձնատուր են միայն բնական ուժերին...

Եւ միայն կոյրերը կարող են չտեսնել այս բոլորը, և միայն անմիտները չեն մտածի... և [սիղճները կորցրածները կը յեղաշրջեն...: Այո:

Թարգ. ռ. Յուսիկ Արեւայ:

